ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Հետխորհրդային տրանսֆորմացիային նվիրված ուսումնասիրությունները գրեթե առանց բացառության միմյանց հակադրում են դրա երկու հիմնական գործընթացները՝ ինտեգրացիան և ինքնության ամրապնդումն ու պահպանումը: Մասնավորապես, ըստ Վ. Պանտինի և Վ. Լապկինի, ընկալելով ազգային-պետական հարացույցի համապարփակ ճգնաժամի պարագայում ազգայինի արժեքը, ռուսական հասարակությունը երկփեղկվել է արդիականացման անհրաժեշտության և համաշխարհային զարգացման միտումների միջև: Արդյունքում խախտվում է ռուսական ինքնության ազգային և քաղաքակրթական բաղադրիչների միասնականությունը: Դրա վերականգնումից է հիմնականում կախված ազգային պետականության և կայուն զարգացման հեռանկարը[1]: Ակներևաբար, որպես «համաշխարհային զարգացման միտումներ» նկատի են առնված գլոբալացման և ինտեգրացման գործընթացները: Թեև դրանք որոշ փոխադարձ կապեր ունեն, այդուհանդերձ, խնդիրը փոքր-ինչ պարզեցնելու համար դրանց փոխազդեցություններն ինքնության ամրապնդման ու պահպանման հետ կարելի է դիտարկել առանձին-առանձին: Առավել ևս, որ ինքնության խնդիրների հետ որակապես այլ կապ ունի ինտեգրացիան՝ որպես որոշակի արժեհամակարգի յուրացման գործընթաց: Ինքնության արդիականացման ու պահպանման և ինտեգրման գործընթացի փոխազդեցությունների բնույթը (հակադրո՞ւմ, թե՞ համադրում), ինչքան էլ առաջին հայացքից միանշանակ թվա (ինչպես վերը նշվեց, այն համարվում է հակադրում), կարոտ է լուրջ ուսումնասիրության երկու ուղղությամբ՝ ինտեգրումը ինչ-ինչ պատճառներով որոշ ժամանակահատվածում ընդհանուր քաղաքակրթական զարգացումներից դուրս մնացած երկրների վերադարձի գործընթա՞ց է, թե՞ հնարավոր է նաև տարբեր քաղաքակրթական նախահիմք ունեցող երկրների համախմբում այդ մակարդակով. եթե ճիշտ է առաջին հարցադրման առաջին մասը, ապա ամեն մի կոնկրետ դեպքի համար կարևոր նշանակություն է ստանում հաջորդ հարցադրումը. արդյո՞ք ինտեգրման հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինտեգրման հայտ ներկայացրած երկիրը պատկանում է այն քաղաքակրթական համակարգին, որին ցանկանում է ինտեգրվել:

Անշուշտ, երկու հարցադրումներին սպառիչ պատասխան տալու համար տևական ժամանակահատվածի մեծածավալ ուսումնասիրություններ են անհրաժեշտ, սակայն ակնհայտ է, որ եթե անգամ առաջին հարցադրման երկրորդ մասը տեսականորեն չի կարելի ժխտել, ապա այդ դեպքում ինտեգրումը կուղեկցվի

---

[1] **Пантин В. И., Лапкин В. В.,** *Проблемы и перспективы трансформации национально-цивилизационной идентичности современного российского общества (Общественные науки и современность, 2004, N 1, с. 101).*

անհամեմատ ավելի մեծ բարդություններով: Ի վերջո, ինտեգրումը որոշակի արժեքների յուրացում է որևէ հասարակության ու երկրի կողմից՝ զարգացման առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, ինչն ընդհանուր նախահիմքի պարագայում ավելի հեշտ է իրականացնել:

Ակնհայտ է, որ երկրորդ հարցադրման հավաստիության պարագայում ինտեգրման և ինքնության ամրապնդման ու պահպանման գործընթացները ոչ միայն հակոտնյա չեն, այլև փոխնպաստավոր են, քանի որ այդ դեպքում ինտեգրումը պարզապես շեղման փուլում աղավաղված արժեքների վերականգնումն է կամ այդ փուլի ընթացքում ձևավորված նոր քաղաքակրթական բաղադրիչների յուրացումը: Հետևաբար, այնպիսի գործընթացների ժամանակ, ինչպիսին է հետխորհրդային տրանսֆորմացիան, երբ նախընթաց ժամանակահատվածում մեկ միության մեջ միավորված են եղել բոլորովին տարբեր հետագիծ ունեցած և անգամ տարբեր քաղաքակրթությունների պատկանած երկրներ ու ժողովուրդներ, այդ միության քայքայումից հետո նորանկախ երկրների հետագա ընթացքը որոշող մեկնակետը պետք է լինի այն «տեղը», որտեղ նրանք գտնվել են մինչ միավորման գործընթացը: «Տեղը» բառը չակերտների մեջ է վերցված, քանի որ արտահայտում է ոչ թե աշխարհագրական կամ ֆիզիկական իմաստ, այլ քաղաքակրթական: Պատահական չէ, որ շատ ուսումնասիրողներ ինքնությունը բնութագրում են երկու՝ ազգային և քաղաքակրթական բաղադրիչներով[2]: Իհարկե, կա նաև տեսակետ, որ կոնկրետ ժամանակահատվածում գոյություն ունի միայն մեկ քաղաքակրթություն: Մասնավորապես, ըստ այդ տեսակետի հետեվորդների, ներկայիս քաղաքակրթական համակարգը բնորոշվում է որպես տեղեկատվական-գլոբալացման քաղաքակրթություն[3]: Դժվար չէ նկատել, որ եթե այլ քաղաքակրթական դասակարգումների դեպքում քաղաքակրթությունների անվանումներն ունեն աշխարհագրական կամ էթնիկ բնորոշում, ապա այս դեպքում անվանումը գործառութային է: Անշուշտ, հնարավոր չէ գերագնահատել տեխնոլոգիաների ու գլոբալ ազդեցությունը արդի հասարակական կյանքի վրա, սակայն ակներև է նաև, որ այս երևույթը շատ կողմերով չի կարող բավարարել քաղաքակրթության դասական սահմանումների պահանջները, մասնավորապես՝ արժեհամակարգի իմաստով:

Ինքնության և ինտեգրացիայի ակնհայտ հարաբերակցությունն է մատնանշում նաև հետևյալ հաստատագրումը. հետազոտողների համար ուշագրավ խնդիր է, «թե ինչպե՞ս է իրականացվում մեկ մշակութային (եթե հարցադրման հեղինակները «մեկ քաղաքակրթության» գաղափարի կողմնակիցներ չլինեին, կարծում եմ, ավելի սկզբունքային կլիներ հարցադրումը՝ «մշակութայինի» փոխարեն օգտագործելով «քաղաքակրթություն» հասկացությունը) մեկ համակարգից մյուսը վերջինիս համար առանցքային նշանակություն ունեցող դիցաբանական համակարգի, սկզբունքային հայեցակարգի, գաղափարախոսության տեղափոխումը և յուրա-

---

[2] Նույն տեղում, էջ 62: *НГ-Религии, 12. I. 2000.*

[3] ***Հովհաննիսյան Դ., Հովհաննիսյան Մ.,*** Միմեսիսն որպես արժեքային համակարգի ադապտացման միջոց (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, Ե., 2005, էջ 24):

ցումը[4]: Հեշտ է նկատել, որ այս հարցադրումը հավասարապես կիրառելի է ինչպես հետխորհրդային, այնպես էլ Խորհրդային Միության սահմաններում ինտեգրացիայի համար: Ավելին, արդյո՞ք տարբեր քաղաքակրթությունների (նաև՝ լայն առումով, մշակույթների) ինտեգրացիայի եթե ոչ անհնարինության, ապա գոնե չափազանց բարդության հետևանք չէր նաև ԽՍՀՄ փլուզումը: Այսպիսով, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար ինտեգրացիայի գործընթացների կարևորագույն նախապայմանը սեփական ինքնության ճշգրտումն է՝ նկատի ունենալով նաև խորհրդային տարիների աղավաղումները և այն միջավայրի ընտրությունը, որտեղ ինքնության վերածնունդն ու ինտեգրացիայի գործընթացը կլինեն փոխլրացնող ու փոխադարձաբար օգտակար: Այսինքն՝ երկու խնդիրների՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի և ինքնության ճշգրրտման հաջող լուծման բանալին մեկն է՝ երկու գործընթացների կառուցումը նույն արժեհամակարգի հիման վրա:

Մինչ հայ ինքնությանն անդրադառնալն ու Հայաստանի ներդաշնակ ինտեգրման միջավայրի ճշգրտումը անցնենք մի շարք ձևակերպումների, որոնց պարզաբանումն ավելի հստակ կդարձնի վերլուծությունն ու հետևությունները:

Ինքնության բաղադրիչները և տարրերը: Ինքնության խնդիրները մշտապես եղել են գիտական և քաղաքական բանավեճերի կիզակետում[5]: Ավելին, արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսաբանները որոշիչ նախապայման էին համարում դրա հասարակական և խմբային տրամադրությունները, քաղաքական և գաղափարախոսական հայացքները, մշակութային և այլ արժեքները, այսինքն՝ հենց մարդու փոփոխությունը, «անձի արդիականացումը»[6]: Հեշտ է նկատել, որ քաղաքակրթական համարվելու հավակնություններ ունեցող համակարգերի փլուզմանը հաջորդող գործընթացները, մասնավորապես, հետխորհրդային տրանսֆորմացիան, անվերապահորեն ուղեկցվում են նոր ինքնության ձևավորմամբ: Ընդ որում, դրանք միաժամանակ երեք չափումներով՝ քաղաքակրթություն, մշակույթ, հասարակություն, զարգացող գործընթացներ են: Զուգահեռաբար ընթացող գլոբալիզացիան ունի երկակի ազդեցություն. մի կողմից այն սեփական պատմության և ինքնության վերագնահատման ու վերակառուցման լայն հնարավորություններ է ստեղծում[7], մյուս կողմից՝ լուրջ վտանգներ և գայթակղություններ՝ հանուն մասնավոր խնդիրների լուծման հասարակականն անտեսելու հնարավորությամբ: Պատահական չէ, որ, ըստ մի շարք ուսումնասիրողների, ազատական ժողովրդավարության ձևավորմանը հատուկ, անձերի սոցիալական հարմարվողականությունն ապահովող որոշ հնարավորություններ քայքայում են քաղաքացիների համակեցության հիմնարար պայմաններից մի

---

[4] Նույն տեղում:

[5] *Проблемы идентичности: человек и общество на пороге тысячелетия, М., 2003; Трансформация идентификационных структур в современной России, М., 2003;* **Giddens A.,** *Modernity and Self-Identity. Self and Society in the Late Modern Age, Cambridge, 1991; Culture, Globalization and World System. Contemporary Conditions for the Representation of Identity, Minneapolis, 1998.*

[6] **Inkels A.,** *Making mem. Modern (American Journal of Sociology, 1969, vol. 75, N 2).*

[7] **Robertson R., Khondker H.,** *Discourses of Globalization: Preliminary Considerations (International Sociology, 1999, vol. 13, N 1).*

քանիսը[8]: Շեշտակիորեն աճող տեղեկատվական հոսքերի և գլոբալ ճանաչում ունեցող խորհրդանիշների ազդեցությամբ զգալիորեն մեծանում է ազգի և պետության հետ կայուն ինքնանույնացմանը սպառնացող վտանգը[9]: Խընդիրն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված երկրները պարտավոր են խոր սոցիալական ու տնտեսական ճգնաժամի պայմաններում զուգահեռաբար դիմակայելու տրանսֆորմացիայի գործընթացով թելադրված բազմաթիվ այլ մարտահրավերների՝ քաղաքական, տնտեսական, ինստիտուցիոնալ և այլն, ինչը լուծումը դարձնում է բազմավեկտոր ու տևական: Ինստիտուցիոնալ և այլ վերափոխումների հաջողության վճռորոշ չափանիշ կարող է լինել ճգնաժամային իրավիճակում քաղաքական հանրության վարքը[10]: Ահա թե ինչու գլոբալիզացիայի գործընթացներով խորացած ինքնության ճգնաժամի հաղթահարումը քաղաքացիական հասարակության հաստատությունների ձևավորման առավել կարևոր և սկզբունքային պայմաններից է[11]:

Հետաքրքիր է ինքնության ընդհանրական ձևակերպումն ըստ հայր Լ. Զէքիեանի. «ինքնություն» հասկացությունը, իր ամենատարերային բնութագրումով, կարելի է բնորոշել իբր հակաբևեռը այլության: «Այն տուեալը, որով որևէ էակի նկատմամբ են *այլ* ՝բոլոր միւս էակները, և ինքը *այլ*՝ բոլոր միւսների նկատմամբ»[12]: Ինքնության և այլության միանգամայն արդարացի հակաբևեռ տեղադրումով հաջորդ քայլը դառնում է պարտադրված. ինքնությունն ու այլությունը փոխադարձաբար պայմանավորվող երևույթներ են, չեն կարող գոյություն ունենալ առանձին-առանձին և այդ առումով անբաժանելի են: Պատահական չէ գերմանացի կոմպարատիվիստ Տ. Շիդերի հաստատագրումը, որ միայն իր երկիրն ուսումնասիրող գիտնականը չի կարող բացահայտել դրա յուրահատկությունները[13]: Իսկ ըստ Ս. Հանթինգթոնի՝ մենք իմանում ենք մեր ո՛վ լինելը, երբ պարզում ենք, թե ո՞վ չենք մենք[14]: Ցավոք, այս ճշմարտությունը հաճախ մոռացվում է հայ ինքնության ուսումնասիրություններում: Պատահական չէ, որ այդ ուսումնասիրությունները, գրեթե առանց բացառության, միայն պատմական անդրադարձեր են ունենում և որպես ինքնության մոդել առանձնացվում է խոր անցյալի որևէ դրվագ

---

[8] **Дилигенский Г. Г.,** *Российские архетипы и современность (Вестник РОПЦ, 1996, N 2);* **Лапкин В. В.**, *Трансформация политических ценностей российских избирателей. Политическая наука. Динамика политического сознания и поведения (Сборник научных трудов ИНИОН РАН, 2002, N 2).*

[9] **Ritzer G.**, *The McDonaldization of Society. An Investigation into the Changing Character of Contemporary Social Life, 1993, Thousan Oaks (Ca).*

[10] **Лапкин В. В., Пантин В. И.**, *Освоение институтов и ценностей демократии украинским и российским массовым сознанием (Полис, 2005, N 1, с. 50).*

[11] **Пантин В. И., Лапкин В. В.,** նշվ. աշխ., էջ 82-85:

[12] ***Զէքիեան Լ. Պ.,*** Հայ ինքնություն (Ինքնության հարցեր. Տարեգիրք, Ե., 2002, էջ 33):

[13] **Шидер Т.,** *Возможности и границы сравнительных методов в исторических науках (Философия и методология истории, М., 1977).*

[14] **Huntington S. P.**, *The Clash of Civilizations and the Remarking of World Order, 1996, p. 17.*

(հաճախ՝ պատմահայր Խորենացի)[15]: Անշուշտ, ինքնությունը բնորոշելիս դրա դրսևորման պատմական փայլատակումներն իրենց արժանի տեղը պետք է ունենան, սակայն սոսկ դրանցով սահմանափակվելը չափազանց վտանգավոր է: Ինքնությունը բազմաչափ և բազմարժեք երևույթ է, և այն «չէ մէկ անգամ տրուած, իրագործուած, սպառած, կատարեալ մի իրողութիւն, այլ ենթակայ է հարատեւ զարգացման, յեղաշրջումի, յետ եւ յառաջընթացներու, բարւոքման, կատարելագործման»[16]: Կա թյուր պատկերացում, որ ինքնությունը բնորոշող արժեքային համակարգն ինչ-որ քարացած սկզբունքների ամբողջություն է, և ինքնության պահպանումը ենթադրում է հին դարերում գոյություն ունեցած մի համախմբի բացահայտում, վերականգնում և անվերապահ կիրառում: Մինչդեռ ակնհայտ է, որ ինքնությունաստեղծ երկու բաղադրիչները՝ ազգն ու հայրենիքը, դինամիկ համակարգեր են, և ժամանակային գործոնն առավել ազդեցիկներից է դրանց զարգացման համար: Հետևաբար, ինքնությունը, ամեն մի ժամանակաշրջանում եզակի լինելով հանդերձ, յուրաքանչյուր ազգի ու երկրի համար ժամանակի մեջ ենթարկվում է այլափոխությունների: Համեմատական վերլուծություններում ժամանակի օգտագործումը՝ որպես փոփոխական, վաղուց քննարկման առարկա չէ: Խնդիրը միայն այդ փոփոխականի ներառման մեխանիզմն է[17]:

Կարևոր է նաև ինքնության բովանդակային սահմանումը, մասնավորապես՝ ազգային հարթությունում: Որպես ընդհանրական սահմանում՝ թերևս կարող է կիրառվել հետևյալը. ազգային ինքնությունը տվյալ ազգի կերպատու գործոնների (տարրերի) այն համախումբն է, որը լիարժեքորեն բնութագրում է այդ ազգը և չի կարող ամբողջությամբ կրկնվել մեկ ուրիշի համար: Ընդ որում, այդ համախմբի մեջ կարող են լինել ինչպես առանձնահատուկ տարրեր (ինքնության ազգային բաղադրիչ), այնպես էլ այլ ազգերի համախմբերում հանդիպող ընդհանրական հատկանիշներ (ինքնության քաղաքակրթական բաղադրիչ): Առաջին բաղադրիչը կարող է նաև դիտվել որպես երկու՝ էթնիկ և ազգային բաղադրիչների գումար: Էթնիկ ինքնությունը հիմնված է անձնական մակարդակով ընկալվող գործոնների համախմբի վրա (լեզու, ավանդույթներ և սովորություններ, մշակութային հիշողություն, տարածք և այլն): Ազգային ինքնությունը հիմնված է քաղաքակրթության զարգացման, տնտեսական պաշարների, հասարակության և պատմական անցյալի մասին պատկերացումների վրա[18]: Ակնհայտ է, որ այս հոդվածի հարցադրման շրջանակում այդ բաժանումն էական նշանակություն չունի և չի օգտագործվելու:

Ինքնության ազգային և քաղաքակրթական բաղադրիչների վերաբերյալ շարադրանքն ամբողջացնելու համար թերևս արժե դիտարկել դրանց մի քանի

---

[15] ***Ստեփանյան Ա.,*** Ինքնության ազգային չափումը (նախնական դատողություններ) (Ինքնության հարցեր. Տարեգիրք, Ե., 2002, էջ 18-21): ***Մարգարյան Մ.,*** Ազգային մտահայեցողություն և ինքնակառավարում (նույն տեղում, էջ 62, 64):

[16] ***Զէքիեան Լ. Պ.,*** նշվ. աշխ., էջ 35:

[17] **Bartolini S.**, *On Time and Comparative Research (Journal of Theoretical Politics, 1993, vol. 5, N 2).*

[18] **Семененко И. С.,** *Культурные факторы и механизмы формирования российской национально-цивилизационной идентичности на рубеже XXI в. (Полис, 2004, N 1, с. 109).*

օրինակներ: Ինքնության ազգային բաղադրիչի տարրերից յուրաքանչյուրն առանձնահատուկ է տվյալ ազգի համար: Անկասկած, հայ ինքնության պարագայում դրանց շարքը պետք է դասել Հայոց լեզուն, Հայ Առաքելական եկեղեցին, Ղարաբաղյան խնդիրը, Ցեղասպանությունը, Հայրենիքի կերպարը, Սփյուռքը և այլն: Այս բոլորովին էլ ոչ լրիվ թվարկումն արդեն իսկ ակներևորեն հաստատում է, որ ինքնությունը (այդ թվում՝ և դրա ազգային բաղադրիչը) համախումբ է, որի տարրերը ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել: Ավելին, հնարավոր է անգամ այս կամ այն տարրի տեղափոխում քաղաքակրթական համախմբից ազգային և հակառակը (վերջինն այն դեպքում, եթե տվյալ ազգային մշակույթը տվյալ քաղաքակրթության մեջ ունի գերակայություն): Որպես օրինակ կարելի է դիտարկել Հայ Առաքելական եկեղեցին: Հայ մշակույթ թափանցելով որպես քաղաքակրթական տարր (քրիստոնեական վարդապետություն)՝ այն պատմական կարճ ժամանակահատվածում ստացավ ազգային նկարագիր ու վերածվեց ինքնության ազգային բաղադրիչի: Խնդիրը միայն այն չէ, որ կրոնական գործոնը կարևոր դերակատարություն ունի ազգային-քաղաքակրթական ինքնության ձևավորման գործում, և դավանաբանական պատկանելությունը հստակ արտահայտվում է էթնիկ խմբերի քաղաքակրթական ընտրության ժամանակ[19]: Ընդ որում, ոչ միայն քրիստոնեություն-իսլամ հակադրության, այլև «քաղաքակրթական առումով մոտ քրիստոնեական Արևմուտք-սեփական ուղի» երկփեղկման: Հայության պարագայում այն ունի իր հստակ արտահայտված առանձնահատկությունները: Հարցը միայն ընտրության միասնականությունը չէ. 1995-2002 թթ. հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության 95%-ն իրեն համարում է Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ[20], մինչդեռ, օրինակ, Ռուսաստանում այս կամ այն դավանանքին իր պատկանելության մասին հայտարարել է հարցվածների 61%-ը[21]:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անգամ օտար ուսումնասիրողները Հայ եկեղեցին դիտում են[22] որպես ավելի մեծ մի երևույթ, քան դա հնարավոր է անել սոսկ եկեղեցաբանական մոտեցմամբ: Ավելին, Հ. Գոլցը[23] հղում է անում Հայնրիխ Վիլհելմ Լուդոլֆի նամակին՝ ուղղված 1700 թ. Հալլեի պիետիստների առաջնորդ Ֆրանկեին. հայ ուսյալ տպագրիչների հետ ծանոթանալուց հետո ինքն այն տեսակետին է հանգել, թե Հայ եկեղեցին հունականի հետ համատեղ ամենակարևորն է, ընդ որում, նա «եկեղեցի» հասկացության տակ նկատի ունի կրոնի, մշակույթի և տեսական ու կիրառական գիտության ողջ

---

[19] Նույն տեղում, *էջ 110:*

[20] **Погосян Г.,** *Армянское общество в трансформации, Е., 2003, с. 361.*

[21] *НГ-Религии, 12. I. 2000.*

[22] **Գոլց Հ.,** Բաց էթնոսը՝ ի հակադրություն փակ կայսրության. Հայոց մշակութային արքետիպը (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին), **Կաշուբա Վ.,** Ինքնության քաղաքականություն. Հայաստանի դեպքը (նույն տեղում), **Շպեռլինգ Դ.,** Եվրոպականացում՝ գլոբալիզացիայի փոխարեն (նույն տեղում):

[23] **Գոլց Հ.,** Բաց էթնոսը՝ ի հակադրություն փակ կայսրության. Հայոց մշակութային արքետիպը (նույն տեղում, էջ 38):

համախումբը: Եվ սա այն պարագայում, երբ Հայաստան-Բյուզանդիա համեմատական մշակութային տիպաբանության այնպիսի թեմատիկ փորձ, որ պատմագիտությունից այն կողմ անցներ, համակարգային ձևով ձեռնարկված չէ մինչ այսօր: Նույն հարթությունում է նաև Վ. Կաշուբայի խորհուրդը. քրիստոնեական գաղափարի և կրոնական ծեսերի համատեքստը պետք է հասկանալ որպես հայ հասարակության մշակութային հիշողության կորիզ: Հիշողություն, որը պատմականորեն հին է և հետևապես մեծ կարևորություն ունի նույնիսկ Եվրոպայի հետ ավելի սերտ կապեր հաստատելու այսօրվա նախագծի համար[24]: Անգամ Դ. Շպեռլինգի առաջարկը՝ չմեկնաբանել քրիստոնեական քաղաքակրթությունը՝ ելնելով հայ քրիստոնեության անցած ճանապարհից[25], թեև թելադրված է հայ-եվրոպական կապերի առասպելականացված պատկերացումները «կոտրելու» մղումով, սակայն, փաստորեն, Հայ Առաքելական եկեղեցու ինքնատիպության ևս մեկ ընդգծում է: Ինչ վերաբերում է քաղաքակրթական բաղադրիչին, ապա Հայաստանի հասարակական կյանքում այսօր ձևավորվել է մի վիճակ, երբ ամբողջ խորհրդայինն արժեզրկվել է, իսկ ազգային շատ ավանդույթներ խորհրդայինին պատվաստման հետևանքով այլասերվել են և ազգայինի անվան տակ գործառվում են իրականում անբնական ճանապարհով փոխակերպված տարրեր[26]:

Այսօր սովորական հայի գիտակցության մեջ գերակշռող են ընտանիքի և անձնական շրջապատի արժեքները: Արժեքային աստիճանակարգում էապես թուլացել և հետին պլան են մղվել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հայրենիքը, երկիրը, ազգը, պետությունը: 1991-1997 թթ. լիովին արժեզրկվել էին այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են ազնվությունը, նվիրվածությունը, պարկեշտությունը, արդարությունը[27]: Երկու օրինակ՝ ըստ Ա. Թադևոսյանի [28], արժեքային միայն մեկ՝ ընտանիքին վերաբերող խմբին առնչվող: «Կին-մայր» ավանդական արժեքը մարտահրավերների առաջ է հայտնվել «ազատ կին» նորագույն արժեքի ձևավորմանը զուգընթաց: Վերջինը, անկասկած, ժամանակի թելադրանքով հասարակության մեջ կնոջ դերակատարության օբյեկտիվ վերանայումների արդյունք է, ինչը վերագնահատումների ու սրբագրումների պահանջ է առաջացնում: Սակայն գործընթացի տարերային զարգացման և հասարակական կյանքի ներկայիս դժվարությունների առկայության պարագայում գրեթե անխուսափելի է այդ երկու արժեքների կոշտ հակադրումը և առաջինի անհուսալի նահանջը, ինչը գրեթե անվերականգնելի այլասերող հետևանքներ կարող է ունենալ թե՛ ընտանիքի և թե՛ ընդհանրապես ամբողջ հասարակության համար: «Պատիվ, հարգանք, շնորհք» տարրերը հայկական ավանդական արժեհամակարգում ունեցել են «լինել ոչ միայն ընտանիքին, այլ նաև համայնքին (հասարակությանը) օգտակար մարդ» իմաստաբանությունը: Խորհրդային շրջանում այլափոխ-

---

[24] **Կաշուբա Վ.,** Ինքնության քաղաքականություն. Հայաստանի դեպքը (նույն տեղում, էջ 109):

[25] Նույն տեղում, էջ 131:

[26] ***Թադևոսյան Ա.,*** Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին (21-րդ դար, 2004, N 2(4), էջ 35):

[27] **Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 360:

[28] ***Թադևոսյան Ա.,*** *նշվ, աշխ., էջ 30-50:*

վեց երկու իմաստավորող գործոնն էլ: Նախ հասարակության գործոնը փոխարինվեց խորհրդային համակարգի (խմբակային) շահով: Ավելի ուշ փոխակերպումներ կրեց նաև ընտանիքի գործոնը՝ աստիճանաբար զրկվելով բարոյական զսպիչ բաղադրիչից: Դա իր գագաթնակետին հասավ արդեն անկախության վերականգնումից հետո: «Ընտանիք պահելը» դարձել է այդ նպատակադրմանն ուղղված ցանկացած քայլի արդարացում, իսկ ընտանիքը կորցնում է իր հասարակական գործառույթը և վերածվում խմբակային շահերի միավորի, որի «կատարյալ» տեսակը մաֆիական «ընտանիքն» է: Ընդհանրապես, ինքնության այլասերման ամենավտանգավոր տեսակը քրեականացումն է, որի պարագայում, օրինակ, նույն «պատիվ, հարգանք, շնորհք» տարրերը բացարձակապես այլ բովանդակություն են ստանում՝ քայքայիչ ազդեցություն ունենալով բոլոր երեք՝ մարդ, ընտանիք, հասարակություն չափումներում:

Հաշվի առնելով տրանսֆորմացման գործընթացներում ինքնության ճշգրտման, պահպանման ու զարգացման խնդրի բացառիկ նշանակությունը և դրա արդիականությունն ընդհանրապես՝ պայմանավորված գլոբալիզացիայի մարտահրավերներով, անհետաձգելի կարևորություն է ստանում ինքնությունը բնորոշող ձևակերպումների հստակությունն ու այդ երևույթի մոդելավորումը: Վերջինիս գոյությունը հնարավորություն կտա ինքնությունը սահմանել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում (տվյալ ազգ-պետության համար, տվյալ ժամանակահատվածում), գնահատել ոչ միայն տարբեր ինքնությունների զարգացման ընթացքը, այլև դրանց համատեղելիությունն այս կամ այն քաղաքակրթական կամ մշակութային համակարգի հետ: Այդ նպատակի համար որպես մաթեմատիկական գործիք կարելի է առաջարկել մատրիցաները[29]: Ինքնությունը կարող է ներկայացվել որպես երկու (ըստ ինքնության բաղադրիչների) կամ ավելի մատրիցայի տեսքով: Անշուշտ, նման մոդելի կիրառումն ու գործնական նշանակության ճշգրտումն առանձին ուսումնասիրության առարկա է, սակայն հետխորհրդային տրանսֆորմացիայի շրջանակներում հայ ինքնության պահպանման խնդիրն ամբողջական չի լինի առանց ընդհանուր անդրադարձի դրա գիտական հիմքին՝ հայագիտությանը:

Հայագիտությունը որպես հայ ինքնության սահմանման, արդիականացման ու պահպանման հիմք: Բնականորեն, անկախության վերահաստատումից հետո հայագիտության մեջ պետք է տեղի ունենային նկատելի զարգացումներ, քանզի որակական փոփոխություն էր արձանագրվել գիտության այս ոլորտի երկու հիմնական օբյեկտների՝ հայության և հայ պետականության պատմական տեղաշարժերի ընթացքում: Այդ ոլորտում արմատական տեղաշարժեր ապահովելու անհրաժեշտություն և հնարավորություն էր առաջացել: Սակայն խնդրի առաջնայնությունը բացարձակապես չընկալվեց և մնացորդային վերաբերմունքի արժանացավ հայաստանյան գիտությունն ընդհանրապես, հասարակական գիտություն-

[29] **Торосян Т.,** *Методика разработки средств тестового диагностирования памяти (Вопросы радиоэлектроники. Серия ЭВТ, 1989, N 12, с. 101-109).*

ներն ու հայագիտությունը՝ մասնավորապես[30]: Իհարկե, խնդիրը նոր չէ և պայմանավորված չէ անկախության վերահաստատումով: Ու թեև վերջինս ավելի ցցուն դարձրեց խնդիրը, իսկ լուծման հրատապությունը՝ անհետաձգելի, սակայն ակնհայտորեն այն դարերի թնջուկ է, թեև շատերն են փորձում իրավիճակը ներկայացնել որպես գլոբալիզացման և հետխորհրդային տրանսֆորմացիայի հետևանք: Պատահական չէ, որ գրեթե նույն մտայնությունն է ի հայտ եկել և՛ անցած դարասկզբին, և՛ այս դարասկզբին: Անցած դարի հայ խոշոր մտածողներից մեկը՝ փիլիսոփա Հ. Ասատրյանը, 1932 թ. փաստում էր, որ «մենք չօգտվեցինք Վերածնության և Լուսավորության դարաշրջանների գիտական ոգորումներից, այլ զարկ տվինք ոչ գիտական կամ կիսագիտական գրական սեռերին և աստիճանաբար խորթացանք իմաստասիրելու արվեստին: Եվ այդ այն չափով, որ առանց այն էլ վիպապաշտության խոր ազդեցությամբ դրոշմված XIX դ. սկսված մեր վերածնությունը չկարողացավ հօգուտ գիտական-իմաստասիրական մտածման արդյունքների որդեգրման՝ մի ուղեփոխություն առաջ բերել»[31]: Պատկերը, անշուշտ, ամբողջացնում է այս հոդվածի բնաբանում բերված միտքը: Վերջերս հրապարակված իր հոդվածներից մեկում ժամանակակից հայագիտության երախտավորներից մեկը՝ հայր Լ. Զէքիեանը, մատնացույց է անում նույն արատը՝ այն ավելի որոշակիացնելով. «ԺԷ-ԺԹ դարերի ընթացքում հայերը կարողացան, արդիականացման ճանապարհին, բարձր արդիւնքների հասնել կեանքի շատ բնագաւառներում: Միւս կողմից, սակայն, նրանք չկարողացան դուրս գալ մի հիմնական ու կենսական սահմանափակման ցանցարգելից: *Նրանց յաջողուեց բացարձակապէս հասկանալ Արեւմուտքը սա հետեւեալ կէտում՝ Արեւմուտքի քաղաքական միտքը, տեսութիւնները, գործընտրանքները»*[32]*:*

Դիտարկումները, բարեբախտաբար, զերծ են հուզականությունից և հայ ինքնությանն ու ընդհանրապես հայագիտությանը նվիրված հայ հեղինակների աշխատություններում ու հոդվածներում այնքան հաճախ նկատվող թերությունից, որ անգամ օտարազգի ուսումնասիրողներն են արդեն նկատում՝ նշելով, որ մենք զննում ենք մեր պատմությունը և առանձնացնում այն, ինչն ամենից շատ ենք սիրում[33]: Ժամանակի մարտահրավերներին հայագիտության համապատասխանեցման հրամայականի անտեսումը, որի հետևանքով հայության ու Հայաստանի համար բացառիկ նշանակություն ունեցող գիտության այս ոլորտը մի կողմից ինքը չի ունենում պատշաճ տեղ ու դերակատարություն, իսկ մյուս կողմից գոնե նվազագույն անհրաժեշտ մակարդակ չի ապահովում Հայաստանում հասարակական գիտությունների ու տեսական-քաղաքական մշակումների համար, ծնում է տարօրինակ զարգացումներ: Այդ վիճակից բխող մտահոգությունների թելադրանքով ու վիճակի հետևանք թյուրիմացությունների պատճառով հայեցա-

---

[30] ***Թորոսյան Տ.,*** Գիտության վերափոխումը հետխորհրդային տրանսֆորմացիայի կարևոր բաղադրիչն է (Հանրային կառավարում, 2005, N 5, էջ 96-110):

[31] ***Ասատրյան Հ.***, Վերանորոգչական շարժման սկիզբը (Հատընտիր, Ե., 2004, էջ 11):

[32] ***Զէքիեան Լ. Պ.,*** Արդիականութեան հայկական ճանապարհը (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 68):

[33] Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 132:

կարգային հարթությունում առաջադրվում են գաղափարներ ու մոտեցումներ, որոնք ոչ միայն խնդիրը չեն լուծում, այլև կարող են թելադրել կեղծ ընթացք՝ է՛լ ավելի խորացնելով բարդ իրավիճակը: Ընդ որում, Հայաստանում հասարակական-քաղաքական մտքի տկարությունը և զգացմունքային մեծ լիցքը, որը հատուկ է այդ խնդիրներին, նման պարագայում պատճառ են դառնում տարբեր հարթությունների (հայագիտություն, քաղաքականություն և այլն) այնպիսի հատումների, որոնք, անկախ գաղափարների ու հայեցակարգերի հեղինակների միանգամայն անկեղծ ու բարի նպատակներից, կարող են դառնալ խիստ վտանգավոր: Մասնավորապես, Գ. Խուդինյանի հոդվածները[34], ներկայիս մարտահրավերների լրջությունն ընդգծելով, փորձում են ելք առաջարկել՝ հայագիտությունը տեղադրելով «քաղաքականության և գիտության հատման կետում», արհեստական մի դիրքում՝ որպես նպատակ ձևակերպելով ազգային շահերի պաշտպանությունը և, մասնավորապես, «օտար հայագիտությունների» դեմ պայքարը: Հաջորդ քայլով հռչակվում է, որ հայագիտությունը «երբեք չի եղել գիտությունների գիտություն և անգամ որոշակի գիտություն»: Իսկ վերոհիշյալ թեզը հիմնավորելու համար հայագիտության բաժանումը վրացականի, ադրբեջանականի, թուրքականի, ամերիկյանի, հրեականի[35]՝ պարզապես անթույլատրելի է, քանի որ կանոնական տեսք է տրվում քաղաքական դրդապատճառներով հայագիտության մեջ կեղծարարության փորձերին:

Իհարկե, հայագիտությամբ միայն հայ գիտնականները չէ, որ զբաղվում են: Որևէ մեկին դրանով զբաղվելն արգելելը անիմաստ է, ու չես էլ կարող դա անել: Ավելին, հնարավոր չէ ժխտել նաև տարբեր քաղաքական նպատակների հետապնդումը: Սակայն դրա դեմ պայքարը ոչ թե նման մեթոդների որդեգրումն ու մրցակցությունն է, այլ հակառակը՝ հայագիտությունը բացառապես գիտական հարթությունում պահելը՝ հենց այդ ճանապարհով բացահայտելով ու ժխտելով գիտական հիմքից զուրկ ու քաղաքական նպատակներ հետապնդող ամեն մի ոտնձգություն: Քաղաքական պայքարը, այդ թվում և ազգային շահերի պաշտպանության նպատակով հայագիտության արդյունքների օգտագործումը, բացառապես քաղաքականության խնդիր է: Եվ վերջինիս տկարությունը չի կարող հիմք լինել այդ գործառույթը հայագիտությանը փոխանցելու համար: Անշուշտ, հայեցակարգի հեղինակն էլ է զգում առաջարկվող «հայագիտական համակարգի» թուլությունը, և թերևս միայն դա է պատճառը, որ գիտական հավակնություններ ունեցող մոտեցումն ամրապնդելու նպատակով օգտագործվում է գիտության մեջ բացարձակապես անընդունելի, անհիշելի ժամանակներից եկող լեզվակռիվներին հատուկ և այդ ժամանակ կիրառվող պիտակավորման մոտեցումը. «Ազգային շահերի պաշտպանության համատեքստում հայագիտության գործառութային դերակատարության ժխտումը ներկայումս հավասարազոր է դառնում Հայաս-

---

[34] **Խուդինյան Գ.,** Հայագիտությունը 21-րդ դարում. ազգային շահերը և հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում (21-րդ դար, 2004, N 1(3), նույն տեղում, 2000, N 2(4):

[35] **Խուդինյան Գ.,** Հայագիտությունը 21-րդ դարում. հայագիտության գործառույթները ազգային շահերի պաշտպանության համատեքստում (նույն տեղում, 2004, N 1(3), էջ 20-24):

տանի ու հայության հանդեպ սպիտակ ցեղասպանության արդարացմանը, անկախ նրանից՝ գիտակցում են դա նրա հեղինակները, թե՞ ոչ»[36]: Այլ դեպքում միգուցե և ավելորդ լիներ նման հրապարակումներին անդրադառնալը, սակայն խնդիրը վերաբերում է մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտի՝ հայագիտությանը, հարցադրումներն արվում են գիտական աշխարհի ներկայացուցչի կողմից, հոդվածները հրապարակվել են գիտակրթական հիմնադրամի հանդեսում: Ավելին, այս ուղղությունն ունի նաև այլ հետևորդներ և ոչ գիտական մոտեցումից վերաճում է վտանգավոր երևույթի: Մասնավորապես, հավանաբար նույն՝ քաղաքականություն-քաղաքագիտություն-հայագիտություն հարթություններում առկա հիմնախնդիրների առկայությամբ մտահոգ, սակայն նույն շփոթությունների ազդեցությամբ, Ա. Այվազյանը ևս փորձում է յուրահատուկ լուծում առաջարկել. «Որքան ստիպված լինենք զիջել քաղաքական բնագավառում, այսինքն որքան ավելի չլուծված խնդիրներ թողնենք ապագային, ճիշտ նույն չափով էլ պետք է վառ պահենք ազգային ոգին, որը հիմնված է ազգի պատմական փորձի ճշմարիտ բացահայտման, ընկալման և յուրացման վրա»[37]: Մեկը մյուսով փոխարինելու այս գաղափարը սին է, քանզի քաղաքական բնագավառում առկա խնդիրների լուծման և ազգային ոգին վառ պահելու հիմքը նույնն է՝ հայագիտության զարգացումը, որովհետև քաղաքականության մեջ լուրջ հաջողությունների ապահովումն անհնարին է առանց հիմնավոր քաղաքագիտական մշակումների, ինչը հայագիտության անբաժանելի մասը պետք է դիտվի: Պատահական չէ, որ առաջին շփոթությունը պատճառ է դառնում երկրորդի, ինչպես նախորդ հեղինակի պարագայում էր, այս դեպքում ևս հայագիտությանը «շնորհվում է» երկդիմի կարգավիճակ՝ հայության համար՝ ինքնապաշտպանական գիտական, իսկ հայության դեմ պայքարող ուժերի համար՝ հարձակողական կեղծ գիտական համակարգի: Եվ այս ամենն ինչ-որ կերպ միմյանց հարմարեցնելու համար հռչակվում է, որ հայագիտությունը, զուտ գիտություն լինելուց բացի, ունի այլ դերակատարություն ևս: Հետևաբար, նախ անհրաժեշտ է հստակություն մտցնել՝ սահմանելով, թե ինչ է հայագիտությունը, որոնք են նրա առնչությունները քաղաքականության հետ, և ինչ է անհրաժեշտ անել հայագիտությունը ոտնձգություններից ու զեղծարարություններից պաշտպանելու համար:

Անշուշտ, ինչպես հասարակական այլ գիտությունների պարագայում, հայագիտության դեպքում ևս կարելի է տալ տարբեր սահմանումներ: Առավել տարածված է թերևս այն սահմանումը, ըստ որի՝ հայագիտությունը կարող է դիտարկվել իբրև ընդգրկուն հումանիտար և մշակութային գիտությունների (ներառյալ նաև՝ աստվածաբանությունը) տիրույթին պատկանող գիտական բնագավառ, որն ուսումնասիրում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, լեզուն: Ակնհայտ է, որ այս սահմանումը, որի շրջանակներում է տևական ժամանակ զարգացել հայագիտությունը, ունի արմատական թերություն. այս սահմանման շրջանակներում հնարավոր է սոսկ զբաղվել պատմական փաստերի

---

[36] Նույն տեղում, 2004, N 1(3), էջ 40):

[37] ***Այվազյան Ա.,*** Հայագիտությունը որպես ինքնապաշտպանական համակարգ ու դիմադրության անհամաչափ միջոց (նույն տեղում, 2005, N 3(9), էջ 141):

մեկնաբանությամբ: Եվ անկախ այդ մարզերում ունեցած մեծ կամ փոքր հաջողություններից կամ դրանց բացակայությունից, հայագիտությունը կտրված է եղել հայության և Հայաստանի ապագան կանխորոշող կամ ուղղորդող մշակումներից: Մինչդեռ, ըստ Դում-Տրագուտի[38], գիտությունը (տվյալ դեպքում՝ հայագիտությունը- Տ. Թ.) պետք է ավելի քիչ զբաղվի պատմական փաստերի մեկնաբանությամբ և նպաստի բազմամշակութային հասարակության ապագա խնդիրների լուծմանը: Ավելին, դա է նաև պատճառը, որ հայագիտությունը Եվրոպայում ուսումնասիրության գրեթե անհայտ բնագավառ է և եվրոպական երկրներում շատ հաճախ ճանաչված է որպես օժանդակ գիտություն, ուսումնասիրության այլ տիրույթների (բյուզանդագիտություն, եկեղեցու հարաբանություն, համեմատական լեզվաբանություն) լրացուցիչ մաս: Ընդհանուր առմամբ այն ընդգրկում է հայերենի լեզվաբանությունը, հայ բանասիրությունը, հայոց պատմությունը, հայկական մշակութաբանությունը (ազգային ավանդույթներ), հայկական աստվածաբանությունը, հայկական արվեստները[39]: Նման իրավիճակում հայագիտության հայ կամ օտարերկրյա ուսումնասիրողներից ողջամիտ ակնկալիքները կարող են լինել միայն համեստ: Իհարկե, կարելի է նաև թուրքասերի պիտակն առատորեն բաշխել օտար երկրներին և ուսումնասիրողներին ու դժգոհել պատմական անարդարությունից: Սակայն միգուցե վերջապես արժե, ինչպես ավելի քան ութ տասնամյակ առաջ առաջարկում էր Հ. Ասատրյանը[40], չդժգոհել աշխարհից, երբ ինքներս խորշելով իմաստասիրելու արվեստից՝ զրկվել ենք մեր հոգևոր և մարմնական ուժերը գիտականորեն կազմակերպելու կարելիությունից: Ու փորձենք գործնական ու գիտական հիմքի վրա կազմակերպել մեր ընթացքը և դրա հաջողությունն ապահովելու կոչված գլխավոր միջոցը՝ հայագիտությունը: Այդ նպատակով հայագիտությունը պետք է ներառի ոչ միայն վերոհիշյալ ուղղությունները, այլև Հայաստանի ու հայության ժամանակակից հիմնախնդիրները, այդ թվում և՛ *քաղաքականության տեսանկյունները:* Անշուշտ, դա պահանջում է հայագիտության սահմանման և բովանդակության արմատական վերանայում, ինչը, իհարկե, ավելի մեծ պահանջներ է ներկայացնում հայագետներին: Սակայն, քանի որ նման մոտեցումը կարևոր տեղ է գրավում եվրոպական համալսարանների մերօրյա քաղաքականության մեջ[41], էականորեն կարող է թե՛ մեծացնել նրանց հետաքրքրությունը և թե՛ առավել արդյունավետ դարձնել հայագիտության օգտագործումը ապագային միտված խնդիրների լուծման տեսակետից:

Հայագիտության քաղաքական տեսանկյունների դիտարկումն ունի մեկ այլ՝ երրորդ նպատակ ևս: Թերևս սա է միակ ճանապարհը հայագիտություն-քաղաքագիտություն-քաղաքականություն՝ տասնամյակներ շարունակ խճճված եռաբաղադրիչ հանգույցն ապաառասպելականացնելու, քանդելու և յուրաքանչյուրի համար պատշաճ տեղ ապահովելու համար: Անշուշտ, արդարացի է հայր Լ.

---

[38] ***Դում-Տրագուտ Յ.,*** Հայագիտությունը՝ գիտության անհայտ բնագավառ Եվրոպայու՞մ (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 92):

[39] Նույն տեղում, էջ 90:

[40] **Ասատրյան Հ.**, նշվ. աշխ., էջ 12:

[41] ***Դում-Տրագուտ Յ.,*** նշվ, աշխ., էջ 89:

Զէքիեանը, արձանագրելով, որ *«Հայաստանի քաղաքականութիւնը չէ եւ չի կրնար ըլլալ* հայ ինքնութիւնը բնորոշող *էական եւ առաջնահերթ* տարրը՝ ընդունելով հանդերձ, անկասկած, այս վերջինիս վճռական կարեւորութիւնն ու դերը ազգային կեանքի որոշ ոլորտներում»[42]: Նրա հետ կարելի է համաձայնել նաև այն հարցում, որ «ազգը» ըստ էության և առաջին հերթին բնորոշվում է ոչ թե իր պետական կարգուսարքով, այլ իր պատմական ու մշակութային հասարակական ժառանգությամբ և դրա գիտակցությամբ ու հասարակության ճակատագրի նկատմամբ հասարակական մտահոգությամբ և նվիրվածությամբ: Այդուհանդերձ, քաղաքականություն-ինքնություն կապը ոչ միայն երկակի է, այլև փոխպայմանավորող: Իսկ այդ կապը պայմանավորող ու արժևորող գործոնը գիտությունն է (ավելի ճշգրիտ՝ հայության ու Հայաստանի պարագայում՝ հայագիտությունը): Կապի երկակիությունն ունի բացառիկ նշանակություն թե՛ Հայաստանի քաղաքականության համար և թե՛ հայագիտության: Քաղաքականությունը կարիք ունի հայագիտությունից բարոյական ու հոգևոր լիցք ստանալու, քանզի տարաբնույթ իշխանական կառույցում պետք է անպայման պահպանվի ազգի ինքնությունն ապահովող արժեքային համակարգի քաղաքական դրսևորումը, ինչպես վկայում է քաղաքակրթության փորձը[43]: Սա իրական բովանդակություն է հաղորդում քաղաքականությանը և իրական նպատակ՝ իշխանական կառույցին: Բացի այդ, Հայաստանի քաղաքականության համար գիտական հիմք, երկրի ընթացքի մոդելավորում, պլանավորում, իրականացում և ճշգրտում հնարավոր է ապահովել միայն հայագիտության ուղղություններից մեկի՝ հայության ու Հայաստանի հարցերով զբաղվող քաղաքագիտության աջակցությամբ: Միաժամանակ, պակաս կարևոր չէ հակադարձ կապը. հայագիտությունն իր բոլոր ուղղություններով կարող է լիարժեքորեն զարգանալ ու կատարել իր առաքելությունը՝ ապահովել հայության ու Հայաստանի լիարժեք կենսունակությունը միայն Հայաստանի քաղաքականության անհրաժեշտ աջակցության պարագայում: Հետևաբար, հայագիտությունը կարելի է դիտարկել որպես մի շարք գիտական դիսցիպլինների հանրագումար, որը կոչված է հայ ինքնության, նրա բաղադրիչների ու տարրերի բացահայտմանը և դրանց կատարելագործմանը՝ ըստ առկա խնդիրների ու ապագային միտված նպատակների, այդ խնդիրների ու նպատակների ձևակերպմանը, դրանց իրականացման ծրագրերի մշակման գիտական հիմքի ստեղծմանն ու կիրառմանը:

Հայաստան-Եվրոպա. ընդհանուր արժեքնե՞ր, թե՞ միակողմանի առասպել: Խորհրդային մարդու, մշակույթի (կամ քաղաքակրթության) ձևավորման անփառունակ փորձից, ԽՍՀՄ փլուզումից հետո կազմավորված անկախ պետություններից յուրաքանչյուրի գլխավոր խնդիրներից մեկը երկրի քաղաքակրթական ուղու ընտրությունն էր: Այդ առումով Ռուսաստանի և նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետխորհրդային ընթացքն ուներ մեկ կարևոր տարբերություն: Ռուսաստանում «կայսերական առաքելության» մտածողությունը չէր վերացել նաև խորհրդային տարիներին, և ԽՍՀՄ փլուզումից հետո միակ տարբերակը, որ նման մտածողության պարագայում իրեն կարող էր թույլ տալ այդ

[42] Ինքնության հարցեր. Տարեգիրք, էջ 41:
[43] ***Մարգարյան Մ.,*** նշվ. աշխ., էջ 60:

երկիրը, առնվազն «սեփական ուղին» էր, իսկ արևմտյան (եվրոպական) արժեքների ընկալման նշանակությունը հիմնականում ճանաչողական էր՝ որոշ տարրերի հետագա վերարտադրության նպատակով: Նման մտածողության համար անուղղակի հիմքեր տալիս է, օրինակ, նորագույն քաղաքակրթությունների շարքում «ուղղափառ քաղաքակրթության» ներառումը, բնականաբար, Ռուսաստանի առանցքային դերակատարությամբ[44]: Փաստորեն, Ռուսաստանի համար տրանսֆորմացիայի գործընթացը թեև թելադրում էր խորհրդային մշակութային շերտի որոշ վերանայում, այդուհանդերձ, զերծ էր մշակութային/քաղաքակրթական ներդաշնակ միջավայրի ընտրության անհրաժեշտությունից: Մյուս երկրների պարագայում նման ընտրությունը պարզապես անհրաժեշտություն էր: Եթե բալթյան երկրների համար ընտրությունը կանխորոշված էր, իսկ միջինասիական երկրների, Մոլդովայի ու Բելառուսի համար՝ կանխատեսելի, ապա Հարավային Կովկասի երկրների և Ուկրաինայի համար խնդիրը բավական բարդ էր: Խնդիրը միայն այն չէ, որ, օրինակ, Հայաստանի պարագայում անկախության վեցդարյա բացակայությունը մշակութային այլ շերտերի ձևավորման բարենպաստ պայմաններ է ստեղծել, որոնց մեջ, անշուշտ, առանձնանում է ավելի քան մեկնկեսդարյա ռուսխորհրդային շերտը: Այս խմբի մյուս երկրների պարագայում թեև առավել խորքային շրջաններն ունեն որոշ տարբերություններ, այդուհանդերձ, վերջին ավելի քան մեկնկեսդարյա շրջանն ընդհանուր էր, հետևաբար նույնն էր և քաղաքակրթական ուղու ընտրության խնդիրը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հարկ էր կողմնորոշվել՝ մնալ ուղղափառ քաղաքակրթության միջավայրո՞ւմ, թե՞ ընտրել եվրոպական (արևմտյան) քաղաքակրթական միջավայր: Առօրեական շեշտադրումներով խնդիրը հաճախ ներկայացվում է որպես Ռուսաստան-Եվրոպա այլընտրանք: Նման այլընտրանք իրականում չի կարող լինել, քանզի երկկողմ հարաբերությունը չի կարող փոխարինել բազմակողմին՝ հատկապես Հայաստանի նման պարամետրերով երկրի համար: Ավելին, Հայաստանի երկկողմ (Ռուսաստան, ԱՄՆ, Իրան, Չինաստան և այլն) հարաբերությունների կարևորությունը չանտեսելով՝ այնուամենայնիվ, մեկ, հարցադրման պատասխան պետք է տրվի. ո՞րն է Հայաստանի հետագա քաղաքակրթական ուղին, ո՞րն է լինելու Հայաստանի զարգացման համար ավելի ներդաշնակ բազմակողմ հարաբերությունների միջավայրը: Տարբերակները խիստ սահմանափակ են. կա՛մ Եվրոպա, կա՛մ Ռուսաստանի ազդեցության տարածք, որը, ըստ Ս. Հանթինգթոնի, կարելի է համարել ուղղափառ քաղաքակրթություն: Թեև վերջինն առանձնապես գրավիչ չէ իր ներուժով, նվազող ու թուլացող ազդեցությամբ և տարածքով, սակայն ունի մեկ լուրջ փաստարկ՝ վերջին մեկ և կես դարի ընթացքում Հայաստանի գտնվելը այդ շրջանակում: Այդուհանդերձ, առաջինն ունի անվերապահ առավելություններ, և հիմնական խնդիրն այդ պարագայում հետևյալն է. արդյո՞ք Հայաստանի համար այդ միջավայրը բարենպաստ է, կամ այլ խոսքով, հայ ինքնությունն ու եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգը համատեղելի՞ են: Խնդիրն ունի ոչ միայն

[44] ***Huntington S. P.***, նշվ. աշխ., էջ 23:

տեսական, այլև գործնական մեծ նշանակություն: Վերջին երկու տասնամյակի ընթացքն ապացուցեց, որ արևմտյան արժեքները (մասնավորապես՝ ժողովրդավարությունը) չեն կարող համապիտանի լինել, ավելին, դրանց ուժային ներդրումը հղի է երկրի համար ծանր հետևանքներով (Աֆղանստան, Իրաք և այլն, որոնք թեև Հայաստանի համեմատ ունեն մի շարք որոշիչ տարբերություններ, այդուհանդերձ, ավելի կշռադատված քայլերի մղող օրինակներ են): Եվրոպական ուղու ընտրության համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակահատվածի ընթացքում հայ ինքնության լիարժեք բացահայտում ու երկու արժեհամակարգերի համադրում՝ իմաստավորելու այդ կողմնորոշումը, ինչպես նաև դրական արդյունքի պարագայում կամք՝ բավական բարդ քաղաքակրթական անցման համար: Միգուցե նման բարդ գործընթացի իրականացումը ԽՍՀՄ փլուզումից հետո կարճ ժամանակահատվածում իրական չէր, սակայն այսօր էլ իրավիճակը նույնն է, այն բացառությամբ, որ Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ երկիր է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, և եվրոպական ինտեգրացիան հաճախ է մատնանշվում որպես արտաքին քաղաքականության առաջնահերթություն: Ինչքան էլ այդ ընտրությունն ակնհայտ թվա շատերին, այդուհանդերձ, հիմնավորումները ոչ միայն լուրջ մոտեցման վկայություն կլինեն, այլև ապագա հաջողության երաշխիք: «Մենք քրիստոնյա ենք, պատմականորեն եղել ենք սահման, կատարել ենք քրիստոնեության առաջավոր հենակետի դերը, ուստի մենք իրավունք ունենք գտնվելու Եվրոպական միության մեջ» առասպելականացված ձևակերպումն իր բոլոր տարատեսակներով ոչ միայն անպտուղ է և անլուրջ, այլև արդեն սկսել է նյարդայնացնել օտարներին[45]: Իհարկե, միառժամանակ որոշ շրջանակների կարող է հույս ներշնչել (հատկապես «գունավոր» հեղափոխություններից հետո) նման ընտրության պարզունակ դրսևորումը՝ Ռուսաստանի նկատմամբ կոշտ հայտարարությունների և եվրոատլանտյան կառույցներին անդամակցելու պատրաստակամության անվերջ հավաստիացումների ձևով (առավել ցայտուն օրինակն է Վրաստանը), սակայն առանց լուրջ քայլերի խնդրի լուծումը հնարավոր չէ ապահովել: Առավել ևս այն մի քանի տարվա ընթացքում, երբ դեռևս հնարավոր է օգտագործել պատմական պահը[46] և ոչ միայն հստակեցնել սեփական զարգացման ուղղությունների ընտրությունը, այլև այդ ընտրությունն առավել արդյունավետ ծառայեցնել երկրի հիմնախնդիրների լուծմանը:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների հասարակական գիտակցության մեջ եվրոպական արժեքների ու ինստիտուտների մասին պատկերացումներն ունեցել են առնվազն երկմակարդակ փոփոխություն: Առաջին մակարդակի պատկերացումները, որ մասնավորեցված չեն և սահմանափակվում են Եվրոպա (ավելի քիչ՝ Արևմուտք), ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն հասկացություններով, թերևս կարելի է համարել, որ առասպելա-

[45] Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 126:

[46] **Ильин М. В.**, *Феномен политического времени (Полис, 2005, N 3, с. 11).*

կանացված էին՝ որպես հետեվանք խորհրդային երկաթյա վարագույրի: Երկրորդ մակարդակը ձևավորվեց ավելի ուշ, արևմտյան ինստիտուտների ու արժեքների (ազատություն, ժողովրդավարություն, շուկայական տնտեսություն, մարդու իրավունքներ, բազմակուսակցականություն, ազատ ընտրություններ և այլն) կոնկրետ պատկերացումների հիման վրա: Առաջին մակարդակի արմատներն այնքան խորն են ու առասպելականացած, որ երկրորդի ձևավորումից հետո անգամ տարիներ անց պահպանում են իրենց կենսունակությունը: «Վերացարկման մակարդակում, երբ խոսքն ընդհանրապես ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության մասին է, ոչ քիչ դրական կարծիքներ կան այդ ինստիտուտների վերաբերյալ… Բայց ժողովրդավարության որոշակի գործընթացներն ու կանոնները, ներկայիս ռուսական պայմաններում դրանց արդյունավետությունը գնահատելիս՝ ժողովրդավարական արժեքների հետ համաձայնությունը կտրուկ ընկնում է… Այսօր սկզբունքորեն ընդունվող ժողովրդավարական արժեքները զանգվածային գիտակցության կողմից գրեթե չեն ընկալվում որպես հասարակության առաջ ծառացած խնդիրների լուծման իրական գործիք»[47],- կարծում է Ե. Բաշկիրովան: Հասարակական կարծիքի հարցումները միանշանակ հաստատում են այդ նկատառումները: Համաձայն Վ. Լապկինի և Վ. Պանտինի[48], եթե ռուսաստանցիների 28,7 և ուկրաինացիների 35,8 (Լեհաստանում՝ 52,4) տոկոսը ժողովրդավարությունը համարում է կառավարման լավագույն ձև, ապա «ժողովրդավարության» կոնկրետացման դեպքում այդ կարծիքն ունեցողների թիվը զգալիորեն ավելի քիչ է (Ռուսաստան՝ 10,2, Ուկրաինա՝ 5,7, իսկ, օրինակ, Հունգարիա՝ 65,9%): Ընդ որում, ճնշող մեծամասնությունը (Ռուսաստան՝ 47,6, Ուկրաինա՝ 60,9%) կարծում է, որ կան կառավարման ավելի կատարյալ ձևեր: Սակայն ինչքան էլ զարմանալի թվա, ռուսաստանցիների 46,2 և ուկրաինացիների 57,6%-ը դեռևս դրական է տրամադրված ռեֆորմների նկատմամբ և բողոքում է դրա խիստ ցածր տեմպերից: Հետաքրքիր է, որ երկու երկրներում էլ բնակչության մոտ երկու երրորդը ժողովրդավարությունն առաջին հերթին պատկերացնում է որպես օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքի իրականացում: Հետխորհրդային տարածքում հասարակության առասպելականացված պատկերացումների դրսևորումների ամենացցուն օրինակը թերևս այն է, որ ռուսների մոտ 65%-ն իրեն ձգտում է նույնացնել Եվրոպայի հետ, իսկ 35%-ը՝ հատուկ եվրասիական ինքնության[49]: Ինչպես վերը նշվեց, առասպելականացված պատկերացումները հատուկ են նաև Հայաստանի հասարակությանը:

Հաշվի առնելով հոդվածի սահմանափակ ծավալը և, որ ամենակարևորն է, հիմնական նպատակը՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում

---

[47] **Башкирова Е. И.**, *Трансформация ценностей российского общества* (նույն տեղում, 2000, N 6, էջ 56, 57).

[48] **Лапкин В. В., Пантин В. И.**, *Восприятие институтов и ценностей в постсоветском пространстве: опыт Украины и России (նույն տեղում, 2004, N 1, էջ 84).*

[49] **Здравомыслов А.**, *О национальном самосознании россиян (Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены, 2001, N 1, с. 61).*

թերևս ամենաբարդ ու բազմաշերտ երևույթի՝ հասարակական-մշակութային ճգնաժամի պայմաններում հասարակական մտածողության վերափոխման ու նոր ինքնության ձևավորման խնդիրների ու դժվարությունների բացահայտումը, ստորև չեն քննարկվի հայ-եվրոպական բազմադարյան խորքային կապերը, այլ միայն կօգտագործվեն մի շարք հեղինակավոր դիտարկումներ՝ ճշտելու արդի խնդիրները, որոնց լուծումը, նշված կապերի համադրմամբ, կարող է իսկապես արդյունավետ դարձնել եվրոինտեգրումը Հայաստանի համար:

Թեև «եվրոպացիներ» հասկացությունը բավական հին պատմություն ունի, սակայն եվրոպացիների շրջանում ինքնանույնացումը գրեթե առանց բացառության ունի պետական-ազգային բնույթ: Եվրոպան, անշուշտ, արևմտյան քաղաքակրթության կարևորագույն մասն է[50], սակայն դրա քաղաքակրթական միասնականությունն ապահովող շրջանակներն այնքան խիստ չեն, ինչպես այլ քաղաքակրթությունների պարագայում է, քանզի խոր սոցիալ-մշակութային ճեղքվածքներ կան ինտեգրացիայի տարբեր խմբերի միջև և անգամ որոշ երկրների ներսում: Ավելին, «Եվրոպական միության հիմնական միտումը Եվրոպայի խորագույն արմատներուն վերադարձի միտումն է»[51], իսկ համաեվրոպական սոցիոմշակութային տարածքի կայացման արդիականացումը կապված է ոչ միայն Եվրոպայի միավորմանը որակապես նոր ազդակ հաղորդելու անհրաժեշտության, այլև գլոբալիզացման ճնշման տակ և պրագմատիզմով հիմնավորվող կորպորատիվ մշակույթի ու ամերիկյան ոճի կենսակերպի ակտիվ պայմաններում ազգային քաղաքակրթական ինքնության լղոզմանը հակադրվելու ձգտման հետ[52]: Հետևաբար, եվրոպական ինտեգրացիան Հայաստանի համար այլ ձևաչափերից նախընտրելի է ոչ միայն արժեքային համակարգի առումով առավել մերձավորության, այլև եվրոպական քաղաքակրթության գլխավոր արժեքներից մեկի՝ թե՛ պետությունների, թե՛ անհատների նկատմամբ հանդուրժողականության տեսակետից, ինչն առավել բարենպաստ է ազգային ինքնության պահպանման համար:

Հայաստանի պարագայում կարող են որոշիչ նշանակություն ունենալ խորքային կապերը եվրոպական մշակույթի ու արժեքների հետ, որոնք, սակայն, պատմության քառուղիներում ենթարկվել են տարատեսակ ձևախեղումների: Նշենք այդ հաստատող միայն երկու հղում, որոնք միմյանց լրացնում են ժամանակագրական և պատկանելության (օտար և հայ հեղինակներ) առումով: Ըստ Ե. Ռաշկովսկու, «Արևմտյան Եվրոպայի կայացման կարևորագույն նախադրյալներից մեկը եղել է տարբեր քաղաքակրթական հոսքերի ու էթնամշակութային փորձերի փոխազդեցությունը: Այդ կապակցությամբ չի կարելի չհիշել նախեվրոպական ժողովուրդներին, միջերկրածովյան Արևելքը, վաղնջական ժամանակները հունական լատինական տարբերակներով, կելտերին,

---

[50] **Huntington S. P.**, նշվ. աշխ., էջ 23:

[51] Հայ ինքնության գիտակցությամբ/ հարցազրույց հայր Լևոն Զեքիյանի հետ (Ազգ, 10. XII. 2005):

[52] **Семененко И. С.**, նշվ. աշխ., էջ 107:

գերմաններին, հայերին, Եվրասիական տափաստանի քոչվոր ցեղերին»[53]: Հայր Լ. Զէքիեան. «ԺԸ դարի երկրորդ կէսից սկսեալ կարող ենք արդէն հանգիստ խօսել հայ լուսաւորական մի ամբողջ շարժումի զարգացման մասին իր բուն արեւմտեան սկզբնատիպի իմաստով: Բայց և միանգամայն պետք է նշել, որ համեմատելով այդ նոյն արեւմտեան նախատիպարի հետ, հայկական արդիականութիւնն ու լուսաւորականութիւնը, իրենց ընկերային և մշակութային դրսեւորումներում ցուցաբերեցին աւելի դանդաղ շրջափոխութիւն եւ արդիւնքներն էլ համեմատաբար սահմանափակ եղան: Ինչ վերաբերում է հայկական տարբերակի այս աւելի դանդաղ ամանակին, մասնաւոր ուշադրութեան արժանի է նաեւ հայ ազատագրական շարժումների շատ ավելի յամրընթաց, ընդմիջուած ու երկարատեւ դեգերումները բաղդատմամբ նման շարժումների ծաւալման ու եզրայանգումների արեւմտեան աշխարհում: …Հետեւանքները ինքնին բաւական են ցոյց տալու այդ գործընթացների ողբերգական ելքը և դրանք առաջնորդող մտքերի բացասական դերը»[54]: Դիտարկումը, որով և պայմանավորում ենք ծավալուն մեջբերումը, հույժ կարևոր է արձանագրելու թե՛ խորքային կապերի առկայությունը և թե՛ խորհրդային շրջանին նախորդող տևական ժամանակահատվածում հեռացումն ընդհանուր նախահիմքերից: Կարևոր է նաև ժամանակի գործոնը: Արդի Եվրոպայում մշակութային հաստատությունների դերն ակտիվորեն վերանայվում է: Դրանց ներկայիս առաջնահերթություններն այսօր ընդգրկում են ոչ այնքան գաղափարա-քաղաքական նախընտրությունների և համապատասխան քաղաքական վարքի մոդելների ձևավորումը, որքան սոցիալական մոտիվացիաների առաջմղումը, «հանդուրժողականության և սոցիալական ներդաշնակության արժեքները, հասարակական կյանքի հարստացումը, քաղաքացիական հպարտության դաստիարակումը և անհատի զարգացումը»[55]: Ակնհայտ է, որ սոսկ խորքային կապերին ապավինելը չի կարող բավարար լինել ինչպես արդի Եվրոպայի կողմից Հայաստանի նկատմամբ հետաքրքրության մեծացման, հայ մշակույթի ճանաչելիության ընդլայնման, այնպես էլ եվրոինտեգրացման արդյունավետության համար: Ավելին, ինչքան էլ դա օբյեկտիվորեն բարդ է, հաջողության ակնկալիքը է՛լ ավելի կարող է մեծ լինել, եթե Հայաստանը հստակեցնի իր տեղն ու դերակատարությունը տարածաշրջանում՝ այստեղ ևս գծելով հստակ, հասկանալի և հիմնավոր ուղենիշներ ինչպես իր, այնպես էլ ուրիշների համար: Եվրոպական տարածաշրջանային քաղաքականության կարևորման պարագայում՝ որպես եվրոինտեգրման էական բաղադրիչ, պատշաճ

---

[53] **Рашковский Е.**, *Внутренний облик и глобально-историческая динамика. (Мировая экономика и международные отношения, 2005, N 12, с. 58-60).*

[54] ***Զէքիեան Լ. Պ.,*** Արդիականութեան հայկական ճանապարհը (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 64, 65):

[55] **Пахтер М., Лэдри Ч.**, *Культура на перепутье. Культура и культурные институты в XXI веке, М., 2003, с. 32.*

ուշադրության է արժանի Դ. Շպեռլինգի դիտարկումը[56]. եթե դուք ուզում եք հայկական ժառանգությունը փոխանցել ապագա քաղաքակրթությանը, ապա առաջին հերթին հարցրեք ինքներդ ձեզ՝ գոյատևման ինչ կերպ եք նախընտրում Հարավային Կովկասում, քանզի հակառակ դեպքում դուք ոչինչ չեք ունենա ձեզ հետ Եվրոպա բերելու համար: Այդ առումով հետաքրքիր է զուգահեռը բալթյան երկրների հետ, որոնց համար տարածաշրջանային չափումն էական նշանակություն ունեցավ եվրոինտեգրացման համար: Իհարկե, սկզբունքային տարբերությունը երկու տարածաշրջանների միջև բազմաթիվ առումներով ակնհայտ է: Սակայն դա ավելի ցայտուն է հենց եվրոինտեգրացման առնչությամբ: Եթե բալթյան երկրների համար տարածաշրջանային համագործակցությունը եղավ ամենաազդեցիկ գործոնը հանուն եվրոինտեգրացման, ապա Հարավային Կովկասում առավել իրական է հակառակը՝ եվրոպական ինտեգրացումն առավել ազդեցիկ (առկա իրավիճակում միգուցե միակ իրական) խթանն է հանուն տարածաշրջանային համագործակցության: Այդուհանդերձ, տարածաշրջանային չափումը բազմակողմ հարաբերությունների ոլորտում է, և այստեղ արձանագրվող մակընթացություններն ու տեղատվությունները չպետք է որոշիչ ազդեցություն ունենան քաղաքակրթական ընտրության ուղղությամբ Հայաստանի ընթացքի վրա:

ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ ИДЕНТИЧНОСТИ В ПРОЦЕССАХ ТРАНСФОРМАЦИИ

ТОРОСЯН Т. С.

Резюме

Одной из важнейших проблем социально-политической трансформации постсоветских государств является проблема модернизации структуры массового сознания (системы ценностей, социально-политических представлений и т. д.), так как массовое сознание играет особую роль в процессе демократизации. Успешное развитие демократии и ее институтов невозможно без поддержки общества. Исследования, посвященные постсоветской трансформации, противопоставляют две основные составляющие этого процесса–интеграцию и сохранение и упрочение идентичности. Если страна, инициировавшая интеграцию, принадлежит той цивилизационной системе, с которой хочет интегрироваться, то этот процесс не только не противоположен процессу сохранения и упрочения идентичности, но и оба процесса взаимополезны. В этом случае интеграция является освоением новых цивилизационных составляющих и восстановлением системы ценностей, которая была искажена на этапе отклонения. В подобном контексте рассматривается европейская интеграция Армении.

---

[56] ***Շպեռլինգ Դ.,*** Եվրոպականացում՝ գլոբալիզացիայի փոխարեն (Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, էջ 297):